

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Թ. Տարի, Թիւ 395, Ուրբաթ, 28 ՅՈՒՆԻՍ, 2017

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՏՕՆ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ (ՎԱՐԴԱՎԱՌ)

Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղավար տօներէն երրորդն է: Աւետարանին համաձայն, մեր Տէրը Յիսուս Քրիստոս՝ Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս առաքեալներուն հետ բարձրացաւ Թաբոր լեռ աղօթելու: Աղօթքի պահուն, Յիսուս անոնց առջեւ պայծառակերպեցաւ՝ «Դէմքը արեգակի նման փայլեցաւ, իսկ անոր զգեստները դարձան սպիտակ՝ լոյսի նման»: Աշակերտները ապշահար կը տեսնեն Մովսէսին ու հրեղէն կառքով երկինք համբարձած Եղիա Մարգարէին, որոնք կը զրուցէին Յիսուս Քրիստոսի հետ...



Արդ, Ուրբաթ 21 Յուլիս 2017ին, վերոնշեալ տօնին առիթով Քուէթի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Օրուան պատարագիչն էր Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեան: Գերապատիւ Հայր Սուրբը իր քարոզին մէջ անդրադառնալով Վարդավառի տօնին ըսաւ



«Այլակերպութեան պատգամը Աստուծոյ հետ մտերմիկ եւ անձնական երկխօսութեան հրաւեր մըն է մեր Տիրոջ պատգամները լսելու ու հնազանդելու անոնց: Այլակերպութեան դէպքի ժամանակ երկինքէն լսուած Հօր Աստուծոյ ձայնը ուղղուած աշակերտներուն ուր Ան կ'ըսէր. «Այս է իմ միածին որդիս, անոր մտիկ ըրէք» նաեւ կոչ մըն է ուղղուած մեզմէ իւրաքանչիւրիս, լսելու, հնազանդելու եւ միանալու Տիրոջ: Լսել կը նշանակէ կարդալ Աստուծոյ խօսքը եւ հետեւիլ անոր պատգամներուն: Մոյն դրուագը նաեւ հրաւեր մըն է աղօթքի ճամբով բարձրանալու առ Աստուած, ճանչնալու մեր Արարիչն ու անոր ձայնը եւ անկէ ըմբռնելու աստուածային լոյսն ու գիտութիւնը եւ այդ լոյսը տարածելու, աճեցնելու ու վերածելու ծառայութեան ու առաքելութեան»:

WWW.AZTARAR.COM

ՀԱՅԿԱԿԱՆ

**Հայաստանի Հանրապետության Պաշտպանության
Նախարարությունը Կը Զգուշացնէ Ագրպէյճանի
Զինուորական-Քաղաքական Ղեկավարությունը**

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կտրականապէս կը հերքէ Ագրպէյճանի պաշտպանության եւ արտաքին գործոց նախարարություններու միացեալ յայտարարութիւնը, ըստ որուն, իբրեւ թէ Չորեքշաբթի օր, ամբողջ օրուան ընթացքին, Հայաստանի զինուած ուժերու ստորաբաժանումները գնդակոծած են ագրպէյճանական զինուորական դիրքերը, ինչպէս նաեւ խաղաղ բնակավայրերը:

Հայաստանի պաշտպանության նախարարությունը կը յայտարարէ, որ Հայաստանի զինուած ուժերը սահմանի ամբողջ երկայնքով որեւէ գործողութիւն չեն կատարած եւ նոյնիսկ մէկ կրակոց չեն արձակած: Աւելի՛ն. ի տարբերութիւն Ագրպէյճանի նման մնայուն գործելաձի, Հայաստանի Հանրապետության զինուած ուժերը երբեք եւ որեւէ պարագայի նշանառության տակ չեն առած խաղաղ բնակավայրերը, եւ պնդումները զանոնք ոմբակոծելու վերաբերեալ պարզունակ ապատեղեկատուութիւն են, կամ՝ ագրպէյճանական կողմի ապագայ սադրանքներու համար տեղեկատուական նախապատրաստության փորձ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կը նախազգուշացնէ Ագրպէյճանի զինուորական-քաղաքական ղեկավարությունը, որ որեւէ սադրանքի պարագային հայկական կողմը պիտի դիմէ պատասխան կոշտ գործողութիւններու եւ կոչ կ'ուղղէ զերծ մնալու նոր արկածախնդրութիւններէ, որոնք կրնան անկանխատեսելի հետեւանքներ ունենալ ամբողջ շրջանին համար:

Մին մեղադրանքներու գործելաձի խուսափելու լաւագոյն տարբերակը 1994-1995-ի զինադադարի համաձայնության անվերապահ կատարումն է, նախագահներու մակարդակով ձեռք բերուած պայմանաւորութիւններու՝ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչի խմբակի կարողութիւններու յաւելումն ու դէպքերու հետաքննության մեքանիզմի ներդրումը:

**Պաշտպանության Նախարարության Կեդրոնին Մէջ
Տեղի Ունեցած Է Սահմանամերձ Համայնքներու Խնդիրներու
Համակարգման Յանձնախումբի Նիստ**

26 յուլիսին Հայաստանի պաշտպանության նախարարության կեդրոնին մէջ տեղի ունեցած է սահմանամերձ համայնքներու համակարգման ենթակայ հարցերու լուծման նպատակով ստեղծուած միջնախարարական յանձնախումբի 4-րդ նիստը, որ կը ղեկավարէր յանձնախումբի նախագահ, պաշտպանության նախարար Վիգէն Սարգսեան:

Սահմանամերձ համայնքներու մէջ ներդրումային ծրագիրներու իրականացման, դպրոցներու եւ մանկապարտէզներու դիմաց պատնէշներու, հրետակոծութենէ պատասպարուելու նպատակով թաքստոցներու կառուցման, իրադրութեան սրման պարագային բնակիչներու կողմէ պահակային ծառայութիւն իրականացնելու նպատակով զէնքի տրամադրման, գիւղատնտեսական նշանակության հողատարածքներ տանող ճամբաներու բարեկարգման եւ շարք մը այլ հարցերու վերաբերեալ տրուած յանձնարարականներու կատարման ընթացքի մասին զեկուցումներով հանդէս եկած են համապատասխան նախարարութիւններու:

ներկայացուցիչները, իսկ համայնքներու ղեկավարները ներկայացուցած են իրենց դիտարկումներն ու առաջարկները:

Նիստին մասնակցած են նաև այս համայնքներուն մէջ վերջին տարիներուն ծրագիրներ իրականացուցած միջազգային գործընկեր կառոյցներու եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչները, որոնք եւս ներկայացուցած են իրենց առաջարկները:

Նիստին ընթացքին քննարկուած են սահմանամերձ համայնքներու անվտանգութեան խնդիրներու վերաբերող շարք մը հարցեր:

Հանդիպում Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան Դիւանագիտական Դպրոցի Ունկնդիրներուն Հետ

26 յուլիսին Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան ընդունած է Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան դիւանագիտական դպրոցի ունկնդիրները:

Պաշտպանութեան նախարարը ներկայացուցած է միջազգային զինուորական փոխադարձ գործակցութեան ասպարէզի ներկայ զարգացումները, ինչպէս նաև անդրադարձած է Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան եւ ՕԹԱՆ-ի անդամ պետութիւններու հետ միասնաբար իրականացուող ծրագիրներուն:

Հանդիպումին ընթացքին պաշտպանութեան նախարարը պատասխանած է դիւանագիտական դպրոցի ունկնդիրներու հարցումներուն եւ վստահութիւն յայտնած, որ անոնք իրենց մասնագիտական ամբողջ ներուժը պիտի ներդնեն միջազգային ասպարէզին մէջ Հայաստանի Հանրապետութեան հետագայ յառաջընթացը ապահովելու գործին համար:

Նախարար Սարգսեան Ընդունած է Քանսաս Նահանգի Ազգային Պահակագունդի Պատուիրակութիւնը

26 յուլիսին Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան ընդունած է Միացեալ Նահանգներու Քանսաս նահանգի ազգային պահակագունդի, հրամանատար, գնդապետ-գորավար Լի Թաֆանելլի գլխաւորած պատուիրակութիւնը, որուն կ'ընկերակցէր Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպան Ռիչըրտ Միլզ:

Հանդիպումին ընթացքին ներկայացուցած են Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան եւ Քանսասի ազգային պահակագունդին միջեւ համագործակցութեան շրջագիծին մէջ իրականացուող ծրագիրներու արդիւնքները:

Հայաստանի պաշտպանութեան նախարարը կարելոր նկատած է արհեստավարժ սերժանտական համակարգի զարգացման, զինուորական բժշկութեան եւ միջազգային խաղաղապահ առաքելութիւններուն մասնակցելու պատրաստուող հայկական ստորաբաժանումներու գնահատման նպատակով իրականացուող միջոցառումներուն ընթացքին ունեցած ձեռքբերումները եւ նախանշած համագործակցութեան զարգացման հեռանկարները:

Ամերիկեան կողմը պատրաստակամութիւն յայտնած է այս ուղղութիւններով համագործակցութիւնը շարունակելու երկարատեւ ծրագիրներու ձեւաչափով, եւ անդրադարձած զինուորական-բժշկական ծառայութեան կազմակերպման, անձնակազմի

կրթութեան եւ վերապատրաստման ապահովման, վերականգնողական ծրագիրներու եւ այլ ասպարեզներու մէջ խորհրդատուութեան տրամադրման նշանակութեան:

Հանդիպումին ընթացքին քննարկուած են նաեւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող այլ հարցեր:

Բարլոյեան Բարձր Գնահատած Է Լեռնային Ղարաբաղի Տագնապի Խաղաղ Լուծման Հարցով Արժանթինի Պաշտօնական Տեսակէտը

Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Արա Բարլոյեան 26 յուլիսին ընդունած է Հայաստանի մէջ Արժանթինի արտակարգ եւ լիազօր դեսպան Կոնզալօ Ուրիոլապէիտիան:

Խորհրդարանի ղեկավարը, ողջունելով դեսպանը, բարձր գնահատած է բարեկամ Արժանթինի հետ յարաբերութիւններու առկայ մակարդակը:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահը միջխորհրդարանական յարաբերութիւններու ընդլայնման շրջագիծին մէջ կարելոր նկատած է երկու երկիրներու օրէնսդիր մարմիններու, ինչպէս նաեւ բարեկամական խումբերու արդիւնաւէտ համագործակցութիւնն ու փոխադարձ այցելութիւնները: Արա Բարլոյեան նշած է, որ այս խորհրդարանին մէջ արդէն կազմուած է Հայաստան-Արժանթին բարեկամական խումբ, որ պիտի շարունակէ ղեկավարել Հայաստանի Ազգային ժողովի նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը:

Խորհրդարանի ղեկավարը բարձր գնահատած է Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման հարցով Արժանթինի պաշտօնական տեսակէտը, ինչ որ համահունչ է ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու դիրքորոշումին հետ՝ ընդգծելով, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը կը տեսնէ բացառապէս խաղաղ բանակցութիւններու ծիրին մէջ:

Կոնզալօ Ուրիոլապէիտիա, շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան համար, շնորհաւորած է Արա Բարլոյեանը Հայաստանի Ազգային ժողովի նախագահ ընտրուելուն առիթով: Դեսպանը յոյս յայտնած է, որ երկու երկիրներուն միջեւ ձեւաւորուած աւանդական բարեկամական յարաբերութիւնները կը շարունակեն աւելի ընդլայնիլ:

Հանդիպումին ընթացքին Հայաստանի Ազգային ժողովի նախագահն ու դեսպանը քննարկած են հոկտեմբերին Ս. Փեթերսպուրկի մէջ տեղի ունենալիք Միջխորհրդարանական միութեան վեհաժողովի շրջագիծին մէջ երկու երկիրներու պատուիրակութիւններու հանդիպման ու համագործակցութեան վերաբերող հարցեր:

Զրուցակիցները կարելոր նկատած են հայ համայնքի դերն ու աւանդը հայ-արժանթինեան կապերու զարգացման գործին մէջ:

Քննարկուած են նաեւ Հայաստանի եւ Արժանթինի միջեւ յարաբերութիւններու շարունակական զարգացման եւ տարբեր մարզերու մէջ փոխադարձ շահաւէտ համագործակցութեան ընդլայնման կարելիութիւնները:

Ստեփանակերտը Կը Հերքէ Պաքուի Հաղորդումը, Թէ Հայկական Ուժերու Անօդայն Ագրպէյճանցի Զինուոր Մը Վիրաւորած Է



Ագրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան Չորեքշաբթի օր տարածած տեղեկատուութիւնը, թէ հայկական ուժերու անօդայն թռչող սարքի հարուածէ մը վիրաւորուած է զինուոր Մուրազ Պապաքիշիւ, հերթական ապատեղեկատուութիւն է: Այս մասին կը յայտարարէ Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան մամուլ ծառայութիւնը:

Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութիւնը կը վստահեցնէ, որ առաջնագիծին մէջ իրադրութիւնը կը շարունակէ մնալ յարաբերական հանգիստ, «ուղղակի ագրպէյճանական քարոզչամեքենան կ'աշխատի իր ոճով՝ փորձելով ապատեղակատուութիւններ տարածելու եղանակով մոլորութեան մէջ ձգել ինչպէս իր, այնպէս ալ միջազգային հանրութիւնը»:

«Պաշտպանութեան բանակի յառաջապահ զօրամասերը սահմանագիծի ամբողջ երկայնքին ո՛չ միայն չեն օգտագործած անօդայն թռչող սարքեր, այլեւ կը շարունակեն խստիւ հետեւիլ զինադադարի պահպանման դրութեան», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Փութին Ստորագրեց Հայ-Ռուսական Զինուորական Միաւորում Ստեղծելու Համաձայնագիրը

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին վաերացուց Հայաստանի հետ միացեալ զինուորական միաւորում ստեղծելու համաձայնագիրը:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին ստորագրեց Հայաստանի եւ Ռուսիոյ միացեալ զօրամիաւորում ունենալու մասին օրէնքը: Ըստ «Արմինիա Մփութնիք» կայքին, համապատասխան փաստաթուղթը հրապարակուած է իրաւական տեղեկատուութեան էջին մէջ:



«Վաերացուած է 30 նոյեմբեր 2016-ին Մոսկուայի մէջ Ռուսիոյ եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ Հայաստանի եւ Ռուսիոյ զինուած ուժերու միացեալ խմբաւորում ստեղծելու մասին ստորագրած համաձայնագիրը», ըսուած է փաստաթուղթին մէջ:

Համաձայնագիրը նախապէս վաերացուցած էին Ռուսիոյ խորհրդարանը (Տումա) եւ Ռուսիոյ Դաշնային խորհուրդը:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իր Յուլիս 2016-ի նիստերուն քննարկելէ ետք սոյն օրինագիծը, զայն դրկած էր Ազգային ժողով՝ վաերացնելու:

Խանլարեան. «Նորդուգ-Մեդրի Սահմանային դարպասի միացեալ Օգտագործման Մասին Օրինագիծի Ընդունումը Շահաւէտ էր Երկուստեք»

Իրանահայ պատգամաւոր Կարէն Խանլարեանի համաձայն, օրեր առաջ Իրանի խորհրդարանին մէջ ընդունուած Նորդուգ-Մեդրի սահմանային դարպասի միացեալ օգտագործման մասին օրինագիծի ընդունումը շահաւէտ էր երկուստեք. Հայաստանի Հանրապետութիւնը կարելիութիւն կ'ունենայ տնտեսական գործունէութիւն ծաւալելու 70-80 միլիոննոց շուկայի մէջ, իսկ Իրանը այդ համաձայնութեան միջոցով կարելիութիւն կ'ունենայ համագործակցելու ո՛չ միայն Հայաստանի, այլեւ Եւրասիական տնտեսական միութեան անդամ երկիրներուն հետ:



Իրանահայ պատգամաւոր Կարէն Խանլարեան «Թերթ»-ին հետ զրոյցի մը ընթացքին ըսաւ, որ օրինագիծը մեծ թիւով պատգամաւորներու քուէարկութեամբ ընդունուեցաւ Իրանի խորհրդարանին կողմէ:

«Ասիկա առեւտրական, տնտեսական համագործակցութեան համար բաւական արժէքաւոր համաձայնագիր է, որուն շուրջ համաձայնութիւնը ձեռք ձգուած է նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Հասան Ռուհանիի հանդիպումին ընթացքին: Իրանի խորհրդարանին մէջ արդէն օրինագիծը հաստատուեցաւ», ըսաւ ան:

Պատգամաւոր Կարէն Խանլարեան նշեց, որ օրինագիծը բաւական պիտի դիւրացնէ մաքսային հոլովոյթները երկու երկիրներուն միջեւ: «Ենթադրելի է, որ անիկա բաւական կը նուազեցնէ մաքսատուրքերու չափը: Կը կարծեմ՝ առեւտրական մարզը երկու երկիրներուն միջեւ պիտի վերաճի ռազմավարական մակարդակի», ըսաւ ան:

Հայաստանի հետ Իրանի փոխադարձ յարաբերութիւններու ռազմավարական մակարդակը՝ անկախ շրջանին մէջ քաղաքական իրադրական վիճակէն, անփոփոխ է, որովհետեւ այդ յարաբերութիւնները շատ աւելի խորքային են:

«Նորդուգ-Մեդրի սահմանային դարպասի միացեալ օգտագործումը ո՛չ միայն բարեյաջող օգտագործման համար հող կը պատրաստէ, այլեւ կարելիութիւն կը ստեղծէ ազատ տնտեսական գօտիներու հաստատման: Իրանի մէջ կայ մեծ ազատ տնտեսական գօտի, կը նախատեսուի արդէն Մեդրիի մէջ նման բան հիմնել: Կ'ենթադրուի, որ կարելիութիւն պիտի ստեղծուի նաեւ ջրելէկտրական քաղաքականութեան համար, այսինքն՝ Արաքսը կրնայ օգտագործուիլ ջրելէկտրակայաններ հիմնելու», ըսաւ ան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

**Երուսաղեմը Իսրայելի Յաւերժական Մայրաքաղաքը
Դարձնելու Միտումով. Իսրայելեան Քնեսեթը Քուէարկեց Ի
Նպաստ «Միացեալ Երուսաղեմ»-ի Օրինագիծի
Բանաձեւին**

Իսրայելեան քնեսեթը Չորեքշաբթի օր առաջին ընթերցումով քուէարկեց ի նպաստ «Միացեալ Երուսաղեմ»-ի օրինագիծի բանաձեւին: Աջակողմեան ծայրայեղական շրջանակներու կողմէ ներկայացուած այս օրինագիծը կը կաշկանդէ հետագային Երուսաղեմէն քաշուելու որեւէ որոշում, պաղեստինեիսրայելեան խաղաղութեան հաւանական համաձայնութեան պարագային:

Ըստ այս օրինագիծին, Երուսաղեմը կը նկատուի Իսրայելի յաւերժական մայրաքաղաք եւ կարելի չէ անոր որեւէ տարածքէն որեւէ շերտ զիջիլ առանց 120 անդամ հաշուող իսրայելեան խորհրդարանի (քնեսեթ) 80 անդամներու մեծամասնութեան հաւանութեան:

**Մէուտական Արաբիոյ Թագաւորին Ռուսիա Կատարելիք
Մօտալուտ Այցելութեան Գծով. «Մալման Պըն Ապտել
Ազիզ Թագաւորին Ռուսիա Կատարելիք Առաջին
Այցելութիւնը Պատմական Պիտի Ըլլայ» Ընդգծեց
Մէուտական Արաբիոյ Դեսպանը**



«Մէուտական Արաբիոյ Մալման Պըն Ապտել Ազիզ թագաւորին Ռուսիա կատարելիք առաջին այցելութիւնը պատմական պիտի ըլլայ», յայտարարեց Ռուսիոյ մէջ Մէուտական Արաբիոյ դեսպան Ապտել Ռահման Պըն Իպրահիմ Ռըսսի:

«Մօտալուտ հաւանական այս այցելութիւնը պիտի ծառայէ երկու երկիրներուն միջեւ ռազմավարական յարաբերութեանց հիմնումին», յայտնեց սէուտցի դեսպանը հարցազրոյցի մը ընթացքին:

«Նման բարձր մակարդակի այցելութիւն մը կը կարօտի նախապատրաստական հսկայական աշխատանքի», շեշտեց դեսպանը՝ նշելով, որ այս գծով արդէն իսկ գործակցութեան բազմաթիւ համաձայնագիրներու եւ յուշագիրներու նախագիծեր կը պատրաստուին առ ի ստորագրութիւն:

«Այս այցելութիւնը, որուն թուականը պիտի յայտարարուի օրին, բոլոր մարզերուն մէջ երկկողմանի գործակցութեան լայն հորիզոններ ու կարելիութիւններ պիտի ստեղծէ», ընդգծեց Մէուտական Արաբիոյ դեսպանը: Ան դրուատեց այս գծով «ռուս բարեկամներու հետ համակարգումի յարաճուն ճիգերը»:

Ամերիկեան Պատժամիջոցներու Որդեգրման Պարագային, Պաղ Պատերազմի Վերադա՞րձ

Ռուսիոյ դաշնակցային խորհուրդի պաշտպանութեան յանձնախումբի առաջին տեղակալ Ֆրանց Քլինցֆիշ ղիտել տուաւ, որ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ պարտի անդրադառնալ, թէ կացութիւնը ու՛ր կրնայ յանգիլ ներկայ քաղաքական վարքագիծի շարունակման պարագային: Անոր կածիքով, Ռուսիոյ դէմ ամերիկեան պատժամիջոցներու որդեգրման որոշումը կրնայ երկու կողմերը մղել մութ փապուղիի ուղղութեամբ կամ՝ նոր պաղ պատերազմի: Նմանապէս, խիստ դժուար, եթէ ոչ անկարելի պիտի ըլլան սահմանափակման դիմակալման ամերիկեւոսական գործակցութեան եւ համակարգումի ճիգերը:

Արձագանգներ

Ռուսիոյ, Իրանի եւ Հիւսիսային Քորեայի դէմ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան որդեգրած պատժամիջոցները Չորեքշաբթի օր դատապարտումի լայն ալիք բարձրացուցին առնչակից միջազգային շրջանակներուն մօտ:

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան նախագահ Փոլ Ռայըն յայտնեց, որ իր երկրին «ամենէն վտանգաւոր թշնամիներուն դէմ որդեգրուած այս պատժամիջոցներու վաւերացման պարագային, պատմութեան մէջ ամենէն ընդարձակ տարողութեամբ պատժամիջոցները պիտի նկատուին եւ անոնք կը միտին երաշխաւորել Ամերիկայի անդորրութիւնը՝ խախտելով թշնամի երկիրներու ծրագիրները»:

Ամերիկեան ծերակոյտի միջազգային հարցերու յանձնախումբի նախագահ, Պոպ Քրոքըր յոյս յայտնեց, որ այս պատժամիջոցներու քայլերը ամբողջանան այս շաբաթավերջին:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը ամերիկեան պատժամիջոցներու քայլը նկատեց «ամերիկեւոսական յարաբերութեանց խարխիւր խախտելու միտող ռումբ մը»: Նախագահ Վլատիմիր Փութին համապատասխան կեցուածք պիտի յայտարարէ մօտերս:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը դատապարտեց որդեգրուած պատժամիջոցները եւ զգուշացուց ամերիկեան ծերակոյտին կողմէ անոնց վաւերացումէն՝ զանոնք նկատելով միջազգային օրէնքներու տրամադրութեանց հակոտնեայ քայլ: Հաղորդագրութիւնը ապօրինի քայլ նկատեց ամերիկեան սահմաններէն դուրս գտնուող անձնատրութիւններու դէմ պատժամիջոցներու տնօրինումը: Հաղորդագրութիւնը այս գծով անհրաժեշտ նկատեց ազգային (ֆրանսական) թէ եւրոպական կառոյցներու աշխուժացումը՝ խոստանալով այդ պատժամիջոցներու հետեւանքները քննել Եւրոպական խորհուրդին եւ եւրոպական գործընկերներուն հետ:

Եւրոպական խորհրդարանի յանձնաժողովի անդամները որոշ վերապահութեամբ մօտեցան ամերիկեան պատժամիջոցներու քայլին՝ մտավախութիւն յայտնելով անոնց հետեւանքներուն զծով, յատկապէս՝ Եւրոպական Միութեան մէջ ուժանիւթի օգտագործման օրինագիծի անկախութեան առնչութեամբ՝ խոստանալով յառաջիկայ քանի մը օրերուն ձեռնարկել համապատասխան քայլերու, եթէ եւրոպական մտավախութիւնները անտեսուին: Իրանի նախագահ Հասան Ռուհանի քննադատեց ամերիկեան պատժամիջոցները՝ խոստանալով համապատասխան կեցուածք ցուցաբերել: Ռուհանի թերագնահատեց պատժամիջոցներու ազդեցութեան ու անդրադարձի տարողութիւնը իրանցի ժողովուրդին վրայ՝ շեշտելով, որ Իրան պիտի շարունակէ տոկալ ու դիմադրել:

ԱՆԴՐԱԴԱՐՉ

Լիզպոնի Ուղերձներն Ու Համահայկական Հոչակագիրի Հիմնադրոյթները (Լիզպոնի Գործողութեան 34-Ամեակին Առիթով)

Լիզպոնի գործողութեան նախօրեակին անձնագրի հերոսներու փոխանցած ուղերձներուն մէջ կարմիր թելի նման գոյութիւն ունի հայրենիք ազատագրելու գաղափարը: Գերագոյն զոհաբերութեան հեռահար նպատակը Արեւմտահայաստանի ազատագրումն է, որուն համար նախ պէտք էր քանդուէր լռութեան պատը, ճանաչում ապահովուէր Յեղասպանութեան եւ ապա պարտադրուէր հատուցումը:



Լռութեան պատի ճարճատումը սկսած էր արդէն զինեալ գործողութիւններու իբրեւ անմիջական արդիւնք, այնուհետեւ Լիզպոնով սկսած երթը թէ՛ իբրեւ անձնուիրութիւն, թէ՛ իբրեւ գործողութիւն եւ թէ՛ իբրեւ ներազգային եւ միջազգային արձագանգ կը նուաճէր բարձրակէտը:

Կորուսեալ հայրենիքի վերատիրացումն է Լիզպոնի հերոսներուն առաջադրանքը: Լիզպոնի ուժանակներու պայթումէն հինգ տարի ետք էր, որ կը սկսէր Խորհրդային Հայաստանի ազատագրումի գոյամարտը՝ Արցախի ազատամարտը եւ անոր վրայ խարսխուած Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումը:

Հայաստանեան մակարդակի վրայ դէպի Լիզպոնի հերոսներուն առաջադրած Արեւմտահայաստանի ազատագրման առաջադրանքին ուղղութեամբ լռութեան պատի ճարճատումը արագ կշռոյթներով չէր ընթանար:

Առաջին նախագահը ընդհանրապէս դուրս կը բերէր Յեղասպանութեան միջազգային ճանաչման հրամայականը պաշտօնական Երեւանի արտաքին քաղաքականութեան օրակարգէն: Պէտք էր սպասել իշխանափոխութեան, որպէսզի նորահաստատ վարչակարգը վերստին արտաքին քաղաքականութիւն վերադարձնէր Յեղասպանութեան ճանաչումի անհրաժեշտութիւնը:

Երկրորդ նախագահը, իր պաշտօնավարման օրերուն, քանի մը առիթով ակնարկեց Սեւրի դաշնագիրին եւ Ուիլսընեան իրաւարար վճիռին, սակայն քանի որ այդ

արտայայտություններուն ետին չկար քաղաքական տոքթրին եւ մշակուած ծրագիր, ըսուածը այդպէս ալ մնաց՝ իբրեւ հետեւանքներ չենթադրող յայտարարութիւն:

Հայաստանի Հանրապետութեան երրորդ նախագահին օրով էր, որ թէեւ մէկ կարելոր բացասական շրջափուլ ապրեցաւ այս խնդիրը՝ տխրահոչակ արձանագրութիւններուն առումով, այսուհանդերձ տարբեր առիթներու, ամէնէն բարձր մակարդակներէն հնչեցին թէ՛ Սերի պայմանագիրին այժմեական ու իրաւական նշանակութիւն ունենալու յայտարարութիւնը եւ թէ՛ Ուիլսընի իրաւարար վճիռին պետական գնահատական տալու ելոյթները:

Երկուքն ալ ըստ էութեան ամբողջական Հայաստանի համազգային առաջադրանքին կը վերաբերին եւ ըստ էութեան կը համահնչուին Լիզպոնի հերոսներու փոխանցած ուղերձի գաղափարախօսութեան հետ:



Հատուցման թղթածրարի պատրաստութեան որոշումը, Սերի պայմանագիրն ու Ուիլսընի իրաւարար վճիռը ամրագրուեցան նաեւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով ընդունուած Համահայկական հռչակագիրով:

Լիզպոնի սխրագործութենէն 32 տարի ետք հայ կեանքին մէջ գործող բոլոր ուժերը, հոսանքները՝ պետական, հոգեւոր, հասարակական, միաձայնութեամբ առաջադրեցին այն, ինչ որ յառաջիկայ սերունդներուն ուզած էին փոխանցել Լիզպոնի հերոսները:

Համահայկական հռչակագիրին այս հատուածը՝ «արժեւորելով 1915 թուականին միջազգային հանրութեան կողմէ Անտանտի պետութիւններու 24 մայիսի համատեղ հռչակագիրով հայ ժողովուրդին դէմ իրականացուած ծանրագոյն յանցագործութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ իբրեւ «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ իրականացուած յանցագործութիւն» որակումը եւ օսմանեան իշխանութիւնները պատասխանատուութեան կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպէս նաեւ 1920 Օգոստոսի 10-ի Սերի հաշտութեան պայմանագրի եւ 1920 նոյեմբերի 22-ի՝ Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսընի Իրաւարար վճիռի դերը եւ նշանակութիւնը Հայոց ցեղասպանութեան հետեւանքներու յաղթահարման հարցին մէջ», գաղափարաքաղաքական արժեւորումն է լիզպոնեան ուղերձներուն:

Սերն ու Ուիլսընը խորքին մէջ խորհրդանիշն են այն հայրենիքին, որուն ազատագրման համար Լիզպոն մեկնեցան հինգ հերոսները:

ՏԵՍԱԿԷՏ

21-րդ Դարուն Կը Շարունակուի Լիզպոնի Հինգ Տոնց Պայքարը

Լիզպոնի գործողութիւնը կատարողները երիտասարդներ էին: Անոնք իրենց կեանքերը նուիրեցին հայ ազգի ազատագրութեան դատին եւ արթնցուցին պայքարի հոգին ամբողջ սերունդի մը մէջ, որ այդ սուրբ հինգ տոնց շահը վառ պահեց:

Ներշնչուած ըլլալով այդ տարիներու ուժային պայքարներէն՝ մղուած պաղեստինեան եւ իրլանտական կազմակերպութիւններուն կողմէ, հիմնուեցաւ Հայ յեղափոխական բանակը եւ տասնեակ մը գործողութիւններ կատարեց՝ ի նպաստ հայ ազգային իրաւունքներու ձեռքբերման եւ միջազգային ընտանիքին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման:

Լիզպոնի գործողութենէն արդէն իսկ անցած է աւելի քան 30 տարի: Այդ 30 տարիներուն ընթացքին բազմաթիւ փոփոխութիւններ արձանագրուած են: Նոյնպէս ալ, ազգային- ազատագրական պայքարներու, իրաւագրկուած ազգերու պահանջատիրական միջոցներն ու ձեւերը ենթարկուած են փոփոխութեան:

Ժամանակին, երբ միայն «հրացան»-ն էր պայքարի միջոցը, այսօր համակարգիչն է. ժամանակին, երբ թրքական դեսպանատուններն էին պայքարի ասպարէզները, այսօր ընկերային ցանցերն ու լրատուամիջոցներն են: Այսօր մեր պայքարը մղելէ առաջ պէտք է գիտակցինք, որ փոփոխութիւն մը կայ, եւ այդ փոփոխութեան ականջալուր ըլլալով՝ պէտք է մղենք մեր պայքարը:

Շնորհիւ համաշխարհայնացման երեւոյթին, այսօր որեւէ դէպք, որ կը պատահի աշխարհի որեւէ մասին մէջ, կրնայ մէկ վայրկեանէն տարածուիլ աշխարհի չորս կողմերը:

Այս առիթէն եւս կ'օգտուինք մենք՝ հայերս: Մեր բոլոր բողոքի ցոյցերը ուղղակի սփռուով կը տեղադրենք Դիմատետրի վրայ, իսկ մեր բոլոր կոչերը՝ «Թուիթթըր»-ի վրայ: Սակայն այս բոլորը տակաւին բաւարար չեն. կարիքը ունինք աւելի լուրջ ծրագիրներ մշակելու, կարիքը ունինք յաւելեալ մարդուծի:

Այս աշխատանքը առողջ ճամբու վրայ դնելու համար դպրոցները լուրջ աշխատանք ունին կատարելիք: Անոնք պէտք է արթնցնեն պայքարի ոգին բոլոր աշակերտներուն մէջ, անոնք պէտք է կեդրոնանան Հայկական հարցի պատմական հոլովոյթին վրայ եւ Հայ դատը դարձնեն հայ աշակերտին կարեւորագոյն հետաքրքրութիւնը: Երիտասարդական եւ ուսանողական միութիւնները պէտք ունին արդիականացնելու իրենց գործելակերպը, որպէսզի աւելի սահուն միջոցներով կարենան հասնիլ հայ ուսանող եւ երիտասարդ խաւերուն: Ընկերային ցանցերը պէտք է դառնան այս միութիւններուն գործելադաշտը: Նաեւ զարկ պէտք է տրուի երիտասարդական զրոյցներուն, որովհետեւ անոնց միջոցներով ի յայտ կը բերուին նոր միջոցներ՝ Հայ դատի պայքարին մէջ: Նաեւ՝ այս միութիւնները միշտ բաց պէտք է ըլլան նոր ու արդիական գաղափարներուն, որպէսզի ասպահովեն իրենց մղած Հայ դատի պայքարին գոյութիւնն ու յաջողութիւնը:

Ներկայ ժամանակաշրջանին միայն ու միայն արդիականացումով է, որ Լիզպոնի հինգ տոնց պայքարը կը վերանորոգուի ու կ'ապահովէ իր շարունակելիութիւնը իւրաքանչիւր հայ երիտասարդի մէջ:

Արդիականացումը պիտի սկսի անմիջապէս այն ժամանակ, երբ հարցադրութեան տակ կ'անոնենք Հայ դատի պայքարի նախկին միջոցները եւ կը սկսինք հայթայթել նոր ու արդիական միջոցներ՝ ուժեղացնելու եւ երիտասարդացնելու համար մեր պայքարը: Լիզպոնի հինգ տոնց մղած պայքարի եղանակին նորոգութեամբ եւ միջոցներուն արդիականացումով է, որ մեր ազգային պարտքը կատարած կ'ըլլանք եւ հպարտութեամբ եւ դրականօրէն արձագանգած կ'ըլլանք Լիզպոնի հինգ տոնց՝ «Կ'երդուենք անբիծ պատուովը ձեր, ընդարձակել պայքարը մեր» սուրբ տողերով:

ՆԱԹԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

ՀՄԸՄ-Ի Քեսապի Մասնաճիւղի Սկաուտական Երկրորդ Խորհրդածողովը



29 Յուլիսին տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի սկաուտական երկրորդ խորհրդածողովը՝ ներկայութեամբ ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային վարչութեան ատենապետ Մանուկ Քեօշկերեանի, Շրջանային սկաուտ խորհուրդի անդամներ Յարութ Ղազարեանի եւ Ճորճ Գալայճեանի, Քեսապի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ խորհուրդին:

Մանուկ Քեօշկերեան խօսք առնելով, գնահատեց մասնաճիւղի ութամսեայ ձեռնարկներն ու աշխատանքները՝ մաղթելով յաջողութիւն յառաջիկայ ծրագիրներուն, ապա ներկայացուց մասնաճիւղի վերելքին եւ յառաջդիմութեան նպաստող կարեւոր գործելաձևեր, աստիճանաւորական կազմը արդիականացած ոճով աշխատանքի մղող թելադրանքներ: Ան ներկայացուց նաեւ յառաջիկայ տարեշրջանի ծրագիրներն ու աշխատանքները, ինչպէս նաեւ՝ ՀՄԸՄ-ի 100-ամեակի նախապատրաստութիւնը:

Մասնաճիւղի խմբապետ Յակոբ Թրթոեան ամփոփ ձևով ներկայացուց մասնաճիւղի ութամսեայ տեղեկագիրը:

Մասնակիցները խորհրդակցեցան մասնաճիւղի ներկայ դժուարութիւններուն եւ յառաջիկայ ծրագիրներուն մասին, եւ ներկայացուեցան առաջարկներ:

Ջաւախքի Նուիրուած Դաշտահանդէս

30 Յուլիսին «Արարատ» միութեան շրջափակին մէջ տեղի ունեցաւ Ջաւախքին նուիրուած դաշտահանդէս:

16 տարիներէ ի վեր Նոր Զուղայի Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը, համագործակցութեամբ ՀՄՄ «Արարատ» միութեան Կեդրոնական վարչութեան, կը կազմակերպէ դաշտահանդէս: Ամենամսեայ այս ձեռնարկին հասոյթը կը յատկացուի շրջանի Հայ դատի յանձնախումբին կողմէ ստեղծուած Ջաւախքի հիմնադրամին, որուն գումարներէն ցարդ շարք մը շինարարական եւ վերանորոգման աշխատանքներ իրականացուած են Ջաւախքի տարբեր շրջաններուն մէջ:



Էլենա Պոլպոլեան՝ Կլենտելյի Նորարարության Բաժանմունքի Վարիչ



11 յուլիսին Կլենտելյի Նորարարության, գործադրության եւ հաշուեքննության նորաստեղծ բաժանմունքին անդրանիկ վարիչ նշանակուեցաւ Էլենա Պոլպոլեանը:

Պոլպոլեան երկար տարիներէ ի վեր սպասարկութիւններ կը մատուցէ քաղաքի պետական համակարգին: Արդարեւ, ան 1993-ին, իբրեւ երիտասարդ պաշտօնեայ, մաս կազմած է քաղաքին Երիտասարդական միութեան նախաձեռնած երիտասարդներու յատուկ աշխատանքային ծրագիրին, որմէ ետք ան անցած էր համայնքին հետ յարաբերութեանց մարզ՝ դառնալով հանրային կրթութեան մարզի խորհրդատու եւ ապա՝ վարձու

բնակարաններու քննիչներու բաժանմունքի վերլուծող:

Քաղաքին բարգաւաճման բաժանմունքին միջոցով ան հետեւած է Մոնթրոզի մէջ «Թրէյտըր Ճօզ»-ի շինարարութեան եւ Կլենտելյի «Ալէքս» թատերասրահի վերանորոգման քանի մը նախաձեռնութիւններու:

2015-ին Պոլպոլեան ստանձնած էր քաղաքի Համայնքային զարգացման բաժանմունքի փոխվարիչի պաշտօնը եւ ներկայիս ստանձնած է անոր երկու ենթաբաժանմունքներուն՝ վարչական եւ թաղային սպասարկութեանց ղեկավարութիւնը:

Էլմա Յովհաննիսեան 600 Գիրք Կը Նուիրէ Ըրվայնի Մասնաճիւղի Հայագիտականին

Վերջերս Էլմա Յովհաննիսեան մօտաւորապէս 600 հատոր գիրք նուիրած է Քալիֆօրնիոյ համալսարանի Ըրվայնի մասնաճիւղին մէջ գործող Հայագիտական ուսմանց ծրագիրին՝ ի յիշատակ անցեալ տարի մահացած իր ամուսնոյն՝ Սեպուհ Յովհաննիսեանին:

Հայերէն եւ հայութեան առնչուող անգլերէն գիրքերը կու գան Յովհաննիսեան ամուլին կողմէ տասնամեակներու ընթացքին կուտակուած հաւաքածոյէն եւ պիտի գետեղուին համալսարանի «Լենկսթըն»



գրադարանին մէջ: Նուիրատուն յոյս յայտնեց, որ Հայագիտական ուսմանց ծրագրի ու Քալիֆորնիոյ համալսարանի Ըրվայնի մասնաճիւղի ուսանողները, ինչպէս նաեւ ուրիշներ առիթը կ'ունենան այս հատորները օգտագործելու՝ Հայաստանի եւ հայկական սփիւռքի մասին իրենց գիտութիւնը ընդարձակելու նպատակով:

Նուիրուած հաւաքածոյին մէջ կան հայ ճարտարապետութեան, պատմութեան, գրականութեան, թատրոնին եւ երաժշտութեան նուիրուած հատորներ, իսկ անոնց կողքին՝ համաշխարհային գրականութեան դասական գործերու հայերէն թարգմանութիւններ:

Հայագիտական ուսմանց ծրագրի՝ Մեղրունի ընտանիքի անուան նախագահական ամպիոնի վարիչ Հուրի Պերպերեան իր երախտագիտութիւնը յայտնեց Էլմա Յովհաննիսեանին՝ այս նուիրատուութեան համար, որուն շնորհիւ հաւաքածոն տրամադրելի պիտի դառնայ համալսարանի ուսանողներուն եւ հանրութեան՝ նպաստելով պատմութեան, Հայաստանի, Իրանի եւ այլ նիւթերու շուրջ ուսումնասիրութիւններ կատարողներուն:

Մահ՝ Ֆրանսահայ Վաստակաւոր Դերասանուհի Իզապէլ Սատոյեանի

Յուլիս 10-ին 89 տարեկանին իր մահկանացուն կնքած է ֆրանսահայ վաստակաւոր դերասանուհի Իզապէլ Սատոյեանը:



1928-ին Լիոն ծնած, Հայոց ցեղասպանութենէն վերապրածներու զաւակ, Սատոյեան իր ասպարէզը սկսած է որպէս հագուստ ձեւաւորող՝ իր ծնած քաղաքին մէջ թատերական դասեր ստանալէ ետք: Առաջին անգամ բեմ բարձրացած է 1950-ին, երբ 22 տարեկան էր: Կանուխէն մաս կազմած է համբաւաւոր Ռոժէ Փլանշոնի թատերախումբին. նոյն տարիներուն ալ ծանօթացած է իր ապագայ ամուսնոյն՝ հանրածանօթ դերասան Ժան Պուիզի հետ: Սակայն իր ասպարէզի սկիզբէն տասնամեակներ ետք միայն լայն հասարակութեան ծանօթ պիտի դառնար Անրի Վեռնէօյի «Մայրիկ» ժապաւենին մէջ Աննայի իր դերով:

Հանգուցեալ արուեստագիտուհին խաղացած է աւելի քան 50 ժապաւենի, 25 բեմադրութեան մէջ: Տասնեակ մըն ալ դերեր ստանձնած է հեռատեսիլի ֆիլմաշարերու մէջ: Դերասանուհին վերջին անգամ բեմ բարձրացած էր 2016 դեկտեմբերին, Փարիզի «Թէաթրը տը Լ'Եօվր»-ի մէջ՝ «Թոփչբէն առաջ» ներկայացման համար:

Սատոյեան 2012-ին ստացած էր «Պատուոյ լեգէոնի ասպետ»-ի շքանշան, իսկ 2014-ին արժանացած էր թատերական «Մոլիէռ» մրցանակի՝ որպէս լաւագոյն երկրորդ դերասան:

ԱՅԼԱԶԱՆ

Ի՛նչ Տեսաք Առաջին Հերթին



Ուշադիր դիտեցեք նկարը եւ ըսեք, թե ի՛նչ տեսաք առաջին հերթին: Ձեր պատասխանը հետաքրքրական բաներ պիտի բացայայտե՛ ձեր անձին մասին:

Մեւ Կաթիլ...

Եթե՛ առաջին հերթին սեւ կաթիլ տեսաք, աշխարհի երեսին դուք կարծեք կաթիլ մը ըլլաք, բոլորը ձեր կարիքը կը զգան, որպէսզի բաժակը լեցուն տեսնեն: Դուք շրջապատին հոգին էք, դուք բոլոր հաւաքոյթներուն պակսող մասնիկն էք, բոլորը կը ցանկան ձեր ներկայութիւնը, դուք անփոխարինելի ընկեր էք:

Բոյս...

Եթե՛ առաջին հերթին բոյս տեսաք, դուք տեսաբար կ'աճիք: Մշտապէս զարգանալը ձեզ օրէ օր կը

կատարելագործէ: Ձեր մօտ ամէն բան ծրագրուած է, գիտեք, թե ի՛նչ կ'ուզեք այս կեանքէն: Դուք ծաղկած կը մնաք ձեր ամբողջ կեանքի ընթացքին:

Մատներ...

Եթե՛ առաջին հերթին մատներ տեսաք, շատերուն համար դուք չափանիշ էք: Բոլորին խորհուրդներ կու տաք եւ կ'օգնեք: Դուք բնածին հոգեբան էք, սիրուած եւ փնտռուած՝ բոլորէն: Օրինակելի մայր էք, տիպար դաստիարակ:

Մանդական Թունաւորումներէն Հեռու Մնալու Համար

Ամրան տաք եղանակին ուտելիքներու հետ կապուած թունաւորումները աւելի յաճախակի են: Տան մէջ մաքրութիւնը կը սկսի խոհանոցէն եւ անշուշտ՝ տանտիկիւնէն. ահաւասիկ քանի մը գործնական թելադրանք՝ սննդական թունաւորումները կանխարգիլելու համար:



ա.- Ձեռքերը լուսլ

Տանտիկիւնը յաճախ ձեռքերը պէտք է լուսլ ճաշի պատրաստութենէն առաջ, շուկայէն վերադարձին, աղբամանը կամ այլ աղտոտ իրեր ձեռնելէ ետք: Իսկ լուսլը օճառով կ'ըլլայ եւ ոչ՝ հոսող ջուրին տակ բռնելով:

բ.- Պտուղներն ու կանաչեղէնները լուսլ

Շուկայէն բերուած ուտելիքները անպայման դեղով

կամ ճերմակ քացախով պետք է լուացուին սառնարանը տեղաւորելէ կամ ուտելէ առաջ:

գ.- Սառնարանը մաքրել



Տանտիկինը ամսական դրութեամբ սառնարանը պետք է հականեխէ՝ զայն *օ տը ժաւելով* եւ ջուրով մաքրելով:

դ.- Ուտելիքներուն ժամկետերը ստուգել

Ծրարուած ուտելիքներուն ժամկետերը հետեւողական կերպով պետք է ստուգել: Նաեւ պետք է հրաժարիլ կիսաբաց, ուռած ծրարումներէն:

ե.- Գոց տուփերու մէջ տեղաւորել

Պանրեղէնները եւ այլ ուտելիքներ կափարիչով օժտուած տուփերու մէջ տեղաւորել՝ նախքան սառնարան փոխադրելը:

զ.- Ճաշերու աւելցուքները երկար չպահել

Ամբան եղանակին ճաշերու մնացորդները տեղաւորել կափարիչով օժտուած սպահով տուփերու մէջ եւ, աստով հանդերձ, զանոնք երկար չպահել, այլ յաջորդող քանի մը օրերուն սպառել:



է.- Խոհանոցի աշխատանքի տախտակը մաքուր պահել

Հիմա արդէն շատեր աշխատանքի քանի մը տախտակ ունին. մէկը մսեղէնի, ուրիշ մը բանջարեղէնի, ուրիշ մը ձկնեղէնի եւ այլն... Շատ կարելոր է այս աշխատանքի տախտակները մանրէագերծելը օ տը ժաւելով, քանի որ յատկապէս միսինը եւ

ձուկինը կրնան զանազան թունաւորումներու դուռ բանալ:



Մաքրութեան այս տարրական կանոնները բոլորս անգիր գիտենք, սակայն հեւքոտ կեանքը, աճապարանքը, մտազբաղ վիճակը երբեմն պատճառ կ'ըլլան, որ թերանանք, բան մը, որ թոյլատրելի չէ, երբ ամբողջ ընտանիքի մը առողջութիւնն ու անվտանգութիւնը մեզմէ կախեալ է:

www.kantsasar.com